

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ENCYCLOPÉDIE (مجموعه علوم)

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

1998 ՄԱՐՏ 14

Ամէն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դրոշ: Վեցամսեայ 25, իսկ եւամսեայ 13 դրոշ: Օտար երկրաց համար Տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախսը խմբագրութեան կը վերաբերի: Հասց 49 փարայ: Պաշտպանութիւնը: Բարձրագոյն ալ կ'ընդունուի 100 դրոշի տեղ 100 դրոշ:

ԽՄԲԱԳՐԱԿԵՏ
Ղ. ԲՈՂԱՏ

ՏԵՐԵՆ
Վ. Գ. ԶԱՐԵԱՐԵԱՆ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ՎԱՀՐԱՄԵՆ — Կրթութիւնը մեր մէջ:
Ղ. ԲՈՂԱՏ — Արձագանք գիտական աշխարհէն. — Միլիոնէն վերջ:
ՎԱՐՈՒԺԱՆ — Վարժապետանոցէն առաջ:
Ն. ԹՈՔԱԹԼԵԱՆ — Ժողովրդական իրաւաբանութիւն
Ղ. ԲՈՂԱՏ — Պարտիզանական — Ծնեցեկ եւ իր մշակութիւնը
ԱՐԱՔՍԻ — Առտնին տնտեսականը — Խնձորին յանդիմանը — Աւարտական ըմպելի մը: — Սոցիալական հակամարտութիւն: — Յուսանեալ մէջ յակնիթ հասցնել: — Բարձրագոյն ամանները մաքուր պահելու միջոց: — Թաւիշի յարգարումը
ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը: — Նարնջի անդղ. դոնդող:
ԳԱՌՆԻԿ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ — Հայ լեզու:
ԲԱՐՈՂ — Սարորդի (Վեպիկ):
ԱՎԱԳՐԱԿՈՒԹ — Տիգրան էֆ. Չուհաճեանի:

Հասց 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱԳՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐՔԻՎ

ابو الشهداد جاد، سند، توشرو، ٥٤٠

تاريخ، ١٩٩٨



LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՄԱԺԻԲ



ԼԷՍԻՎ ՎԷՆՒՍ

ԱՌԱՆՑ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՃԱՌԻ ՃԵՐՄԱԿԵՂԻՆԱՅ ԼՈՒԱՑՈՒՄ

Դիւրութիւն — Լաքրութիւն — Խնայողութիւն

Պազդիոյ Կառավարութեան հաստատութեամբ արտադրեալ արծաթ եւ ոսկի միտայնեալ արժանացած

Սոյն հրաշալի նոր գիւտով, ազատեցէք այլ եւս յոգնութիւններէ, աւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէնները մաշեցնող և ձեռքերու ալ վնասող անպատեհութիւններէ:

Ճերմակեղէններ, բրդեղէններ, սեղանի ու խոհանոցի անօթներ եւ այլն լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ առաւելութիւն մ'աւ ունի հականերխիչ ըլլալով:

Փորձեցէք, բազմատեցէք, միշտ պիտի գործածէք:

Լէսիվ անուանով մինչեւ հիմա տեսնուած ապրանքներէն զանազանելու համար պէտք է պահանջել բաքէթներու վրայ վերեւ գրուած ՄՍԺԻԲԻ և ՎԷՆՍԻ մարքաները, խորդախութիւն ընողը օրէնքով կը պատժուի:

Կը ծախուի մէկ գնով Պոլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթիա Մոմհանէ Բիֆաթ խան, թիւ 19, 20 և Պալիս Փընտըզլեան խան, թիւ 3, 1. Արսլանեան և Ս. Էմիրդէ վաճառատունն:

Գաւառացի համար գործակալութիւն կը տրուի, փափաքողները պէտք է գիմեն ընդհանուր թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլիարիոյ, Ռումանիոյ և Սերպիոյ գործակալին, հետեւեալ հասցեով՝

Գ. Սեֆերեան, Մոմհանէ, Բիֆաթ խան, թիւ 19, 20

կ. Գոլլա, Ղալաթիա

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական և Գիտական

ENCYCLOPDIE

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

1898 ՄԱՐՏ 14

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՁ

Ա.

Հուսաւորեալ ազգեր վերջապէս հռչակեցին թէ՛ կրթութիւնը պարտաւորիչ է, չը խնայեցին ոչ մի ծախք նախակրթարաններու թիւը բաղմապատկելու և ապագային բարեկիրթ ուսեալ մի սերունդ ունենալու համար:

Մեր ազգն ալ վերջապէս զգացած է կրթութեան պէտքն և եղեր է ժամանակ որ մեծ եռանդով բացեր են Սկիւտարու ճեմարանն և նշանաւոր դասատուներ իսկ բերեր են:

Եղեր են մասնաւոր անհատներ որ վարժարաններ շիներ են, գիշերօթիկ վարժարաններու համար կտակներ սահմաներ են:

Եղեր է մի հայ գրածախ ալ՝ Յարութիւն Մարգարեան, որ նշդեհ հայերու ոտքն երթալով, կարդալ գրել սորվցնել մտածեր, նախաձեռնակ եղեր, ու յաջողեր է ընկերներ գտնելով կիրակնօրեայ դպրոցներ հաստատել:

Խեղճ պանդուխտներ սորվեր են կարդալ գրել և եղեր են վարժապետ քահանայ, վարդապետ և մինչ իսկ եպիսկոպոս:

Յարութիւն Մարգարեանն է որ ըսեր է առաջին անգամ, թէ դասատուներ պէտք է կառքով պտըտին, ազգի յառաջդիմութիւն անոնցմէ կախեալ է: Պէտք է մեր ուշիմ զաւակներ յեւրոպա կրթել և անոնց յանձնել մեր կրթական գործ:

Ձը կարծէ՞ք որ միայն խօսող մարդ է եղած այդ գրածախ, այլ և աշխատող և իր խորհուրդներ իրականացնող, նա յաջողեր էր մի հայ վաճառականի մօտ հաւաքել 600 ոսկի այս նպատակի համար, սակայն իր մահից յետոյ, այդ գումար Հիւանդանոցի բաղնիքի շինութեան ծախսուեր է կարծեմ:

Ասոնք գրելուս նպատակը՝ չը կարծուի թէ՛ մի անձի կենսագրութիւն գրել մտադրած եմ, քաւ լիցի, այդ Պ. Ա. Ա. վաղեանի գործն է:

Իմ նպատակս սա է թէ՛ կան նոր կարծուած առաջարկներ որ շատ հին են, բայց ցաւալի է ըսել որ ժամանակին չեն գործադրուեր և մեր ետ մնալուն պատճառ են եղեր:

Այսօր կը մտածենք թէ՛ մեր կրթութեան գործն շատ ետ մնացել է, կ'ասենք վարժարան չունինք, դասատու չունինք, դասագիրք չունինք:

Անշուշտ Խացառութիւններ կան, բայց սա ճիշդ է որ եթէ ժամանակին մասնագէտ դասատուներ ունենալու համար ջանքեր ի գործ դրած լինէինք, որոնք եւրոպիայ մէջ ալ դասատու ճանչցուէին, այսօր մեր ունեցած դասատուներ կրնային պակեւ մեր յոյսեր:

Սակայն եղածին վրայ ավաստալ ի զուր է, աշխատինք որ լաւ դասատուներ պատրաստենք և գտնուածներն ալ զարգացնելու միջոցներուն վրայ խորհինք, քանի որ անոնց մէջ կայ փափաք մը՝ օգտակար լինելու Հայ մանկտուայն յառաջդիմութեան, փափաք մը՝ ուսուցանելու, նոր եղանակներն իմաստասիրելու, նոր ոճով դասագիրքերն չփորձելու: Եւ անհրաժեշտ է այս փափաք՝ կը քաջալերուիմ մի քանի խօսքեր ուղղել թէ անոնց և թէ կրթութեան գործին հետ առնչութիւն ունեցողներուն, յուսալով որ անոնք ամուլ պիտի չը մնան:

ՎԱՅՐԱՄԵՆ

ԱՐՑԱԳԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԻԼՏԻՈՒԷՆ ՎԵՐՁ

Ա.

Փիլօքսեռան շատոնց իր նորութիւնը կորսնցուց, Մելտիուն հազիւ թէ անոր տեղը բռնեց, և մինչ անոնց առաջը առնելով միջոցներուն վրայ խորհած ատեննիս, ֆռանսական «Ժուռնալ տ'ակադեմիքիլիւռ բռաթիկ» հանդէսը, երկրագործութեան նոր և աւելի վտանգաւոր թշնամի մը երեւան գալը կ'իմացնէ մեզ, որուն առաջը առնելու միջոցները եթէ

ժամանակին չի գտնուի, պէտք է հրաժարիլ միանգամ ընդ միշտ այն համեղ պտուղներէն, որոնք տարւոյն ամին եղանակներուն մէջ կուգան հետզհետէ մեր սեղանները զարդարել, և մեր ստամոքսները պարարել հաճոյալի հետք մը ձգելով մեր քմքին վրայ: Փիլօքսեռան, միլտիուն, գետնախնձորի ասեփօնը և փէֆֆուլին (ֆէֆֆուլ և փէֆֆուլ) և խնձորի լուծին պէս՝ այս վերջի և ամենէն աւելի ահռելի թշնամին ալ, — կը յուսաւիք արդեօք — ամին կարգի նորութիւններու և ամեն տեսակ տարօրինակութեանց պէս, նոր աշխարհէն կուգայ թեւատարած իր կզակը ցուցնել հորիզոնին վրայէն... Սա Սմերիկան ալ կարծես թէ իր գտնուած օրէն հին աշխարհին գլխուն փորձանք մ'եղաւ — առանց ուրանալու սակայն իր օգտակար կողմերը — մէկդի թողունք վաճառականութիւն, ճարտարարուեստ և նմանները, զորս բոլորովին մեր ձեռքէն առնելով իւրացնել կը ջանայ, հապա սա ֆէֆֆուլ թշնամիները, որ կը զրկէ մեր վրայ և այնչափ տքնաջան աշխատութիւններով յառաջ բերած հառոյթներնիս կ'ոչնչացնեն: Եւ դիտէ՛ք, ամենէն զարմանալին, այդ ֆիլօքսեռան և ինչ հոն իրենց ծառերուն չ'են փնասեր և երբ կուգան մեր այգիներու և պարտէզներու մէջ տեղաւորուել աներեսաբար, եղածը չ'եղածը կը ջարդեն անխնայ: Բայց այս անգամ այդ Սուրբ Յետուի «ՎԷՆ», ինչպէս կ'անուանեն իրենք՝ Ամերիկացիները, և Ֆռանսացիք ալ առանց ժամանակ կորսնցնելու, «ֆէֆֆուլ» ֆէֆֆուլ գիտական անունով կը մկրտեն, իր առաջին հարուածները սկսաւ Սմերիկայի պարտիզպաններուն գլխուն տեղալ, և այս անգամ վտանգը շատ մեծ է, և մինչև որ աստիճան

ծանր պիտի ըլլայ՝ աներեակայելի է որովհետեւ այս միջադէպը՝ որ որդան կարմիրի (գօգսիտէ) ցեղէն է, հակառակ իր ցեղային մասնաւոր յատկութեանց միատեսակ սնունդով գոհանալու, «Բնակէր է, ամեն տեսակ ծառի պտուղներէն ալ կ'ախորժի, ինչ որ գտնայ իր տրամադրութեան տակ իրեն պտուղ՝ չի մերժեր, մինչև իսկ անտառի վայրի ծառերու պտուղները, բայց չի մոռնանք ըսելու թէ՝ որչափ որ խտապահանջ է, փափկաճաշակ ալ է, և մեր մշակուած մրգատու ծառերուն ներկայութեան երբէք անտառինները չ'ուզեր յիշել, աւելի կը նախընտրէ և կը նետուի յայն սքանչելի խնձորենիներուն և տանձենիներուն վրայ, որոնց պտուղները մաղի մը պէս ծակկելով, կ'արգիլէ զանոնք աճել մեծնալու, որոնք բոլորովին այլակերպելով՝ չի հասունցած կը թափին: Ընդհանուր վիժում՝ ծառերուն, երկրագործութեան անհամար թշնամիներուն մէջ աս պակաս էր, որ կուգայ ամենը գերազանցել, և որուն դարմանը տակաւին չ'են գտած այդ խելացի Ամերիկացիները, որոնց ձեռքէն բան մը չի փախիր: Վաշինկթընի երկրագործական դրասներակը մինակ ապացուցած է, Սուրբ Յեսուի ոչիլին արտասովոր աւերիչ կարողութիւնը, և ի սկզբան կը յուսային որ հարաւային Ամերիկայի սահմաններէն ասդին չը պիտի կրնայ գալ, բայց զարմացումով և աւելի սոսկումով կը դիտեն հիմա՝ թէ կլիմայի ցրտութիւնը անոր ընթացքը չ'արգիլէր, և չ'են ալ դիտեր թէ՝ ինչպէ՞ս միացեալ նահանգներու արեւելեան երկիրները, և մինչև իսկ Գանատա մտեր, և ըսիկ միջիկ ալ ու ահեակ առանց խնայելու մանգաղի մը պէս կը ջարդէ հանգիւսած ծառերու պտուղները, Հանրաժամութ մեծանուն էտիսըն

վարպետը ի՞նչ կընէ, ի՞նչ կը մտածէ այս ինքնակոչ և աներես հիւրին նըկատմամբ, արդեօք կարելի չ'է՞ Ելեկտրական լարեր հնարել, որ ծառերուն վրայ ձգելով, անոնք և իրենց պէսերը վարկենապէս մահանան (.) : Գերմանիոյ վաճառականութեան շրջանակը՝ մտահոգ և վրդովուն վիճակի մը մէջ է այժմ. որովհետեւ հետեւ բռնափէսէօն Պ. Ֆուանքի և շատ մը վարպետ մասնագէտներու վկայութեամբ վաւերացած մէկ պաշտօնական տեղեկագրին համաձայն, Պերլինի ելեմտական նախարարը, արգելիչ հրամաններ կ'արձակէ ամերիկեան թարմ պտուղներու ներածման դէմ, և մինչև իսկ ծրարապատ նիւթերու և կենդանի տունկերու մատին:

Ամերիկայէն Համպուրկ հասած տանձի սնտուկի մը մէջ, բռնափէսէօն Ֆուանք շատ մը կենդանի «Բեռլին» ներ գտած է բոլորովին առողջ վիճակի մէջ, որ պիտի կրնային Գերմանիոյ մրգաստանները խուժելով, ոչնչացնել ինչ որ գտնային:

Ամերիկայի մէջ շատ մը միջատապան դեղեր կը գործածեն, բայց մինչև ցարդ ամենն ալ ապարդիւն մնացած են, որովհետեւ միջատը կարծր պատեան մը կը կրէ, որուն վրայ թոյները անկարող են ներգործել: Շատ մը պարտիզպաններ ճարահատած կը կտրեն և կայրեն բոլոր այն ծառերը, որոնք այդ գարշելի միջատին հարուածները կրած են... տունը այրի նէ, անշուշտ մուկերն ալ կ'ոչնչանան: Բայց ո՞վ գիտէ թէ, կրկին բնութեան ոտեղծած միջատահալած թռչուններուն օգնութեան չը պիտի կարօտին այդ պատուհասէն ազատելու համար, որ սակայն մինչև ցարդ մարդկութիւնը անխնայ ջարդ մը կուտայ այդ օրհնեալ ա-

ըրաժաններուն, որսալով զանոնք ամեն տեսակ միջոցներով: Հապա սա չարածճի տղաքները, որ իրենց մասին մեծերէն վար չ'են մնար, և անգթօրէն կ'աւրեն կը քանդեն անոնց բոյնիկները, լսկ վարկենական անհեթեթ հաճոյքներու համար: Անգին երկրագործն ալ իր կարգին, առանց հեռատեսելու, իր արտին շուրջը գտնուած ծառերը, կամ բոլորտիքի մացառները վերցնելով, իր ձեռքով իր բերքերը ոչնչացնող միջատներու հալածիչ, օգտակար կենդանեաց անհետացման տեղի կուտայ:

Եթէ այսպէս շարունակուի, երթաք բարո՛վ առ յաւէտ խնձոր ու տանձ, դեղձ և ծիրան... բայց ասոնց ո՞ր մէկէն պիտի անցնինք:

Ղ. ԲՈՒՍ

ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅԷՆ ԱՌԱՋ

Մեր պզտիկներու տրուելիք կրթական ղեկին ուղղութիւնը, որ ազգին կենսական խնդիրներէն մէկն է, և ամենէն հարկեցուցիչը անշուշտ, որու վրայ ամէն անգամ որ առիթը ներկայանայ, գրողներ չեն պակսիր, և այժմ էտ թիւն ըլլալէ ալ չի դադարի երբեք խնդիր մը որու վրայ որչափ գրուի, որչափ յեղեղուի, այնչափ աւելի կ'արժէ կարծեմ և այնչափ լրջօրէն մեր ուշը դարձնելու ենք անոր վրայ: Վասն զի հոն մարդկութիւնը իր ապագան կը դարձնէ ներկային պատրաստած կազմանիւթերով, և հարկ է որ, այդ կազմանիւթերու ընտրութեան մասին մեր ամենէն մանրակրկին հետազօտութիւնները և անաչառ քննութիւնները, և մեր խնամոց և հոգածութեան հսկողութիւնը առկա ենք, որպէս զի ապագայ սերունդի նկատմամբ մեր պարտքը նուիրագործած ըլլանք:

Այսչափ տարիներէ ի վեր, այսպիսի կենսական խնդրոյ մը լուծում մեղադ-

րիլի անտարբերութեամբ մը տարուերեցինք և մեք երևակայական սին յոյսերու մէջ օրօրուելով, հեշտօրէն քնացանք, զայն յանձնելով շատ անգամներ անձեռնհասներու կամահաճ աչառութիւններու:

Կարծելով թերևս որ, պաշտօնի կոչուող ամէն անձնաւորութիւն հոգին Սուրբէն կը ներշնչուի: Անշուշտ նսրութիւններ չեն ըսածներս, և սակայն իրողութեան դառնութիւններն են անոնք, զորս պարզել կը փորձեմ ըսէք, թողային վարժարաններու հոգն ու խնամքը որո՞ւ յանձնած ենք: մինչև ցարդ թաղ, խորհուրդներու, այնպէս չ'է՞:

Հազուադէպ րացառութիւններէ զատ, կրնա՞նք ըսել թէ՛ այդ անձնաւորութիւններ ազգին կրթական ղեկը վարելու կարող և ատակ էին կը տարակուսիմ, վասն զի շատ անգամ այնպիսիներ խի գտնուած են որ իրենց տգիտութեան և կամապաշտութեան, և կամ մինչև խի չահագիտական նպատակներու ասպարէզ ըրած են:

Եւ կամ ե՞րբ ուսուցիչներու մասին արժանաւոր և անաչառ ընտրութիւն ըրինք, երբ մեր մատաղ տղաքներու դաստիարակութեան հիմը շինել ուղեցինք: Եւ ոչ մէկ ատեն, այնպէս չ'է:

Մտածեցինք լրջօրէն, երբ նորանոր ծրագիրներ պատրաստեցինք պարզել կը փորձեմ կրթական ղեկի տրուելիք ուղղութեան համար:

Կրնա՞նք ըսել այի, երբ այսօր նոյն խի այդ ծրագիրներու և իրենց արդիւնքին դէմ կը արտոնջանք:

Ամենէն աղքատիկ թաղերու վարժարանին մէջ, ամբողջ տարին ժրջան փութկոտութիւն մը կը տիրէ շնորհիւ այդ շողջողուն ծրագիրներու, իր սեմէն ներս մանող պզտիկը դատապարտուած է շատ բաներ սովորելու: Սակայն կաղաչեմ ըսէք ի՞նչ արդիւնք ձեռք բերինք մինչև ցարդ այդ տաքարիւն փութաջանութեամբ, և այնչափ անձնուէր ծառայութիւններով, ինչ որ չէինք ակնկալէր, այնպէս չ'է՞:

Բնական ձիրքերով և հանձարով օժտեալ և ինքնաշխատութեամբ յառաջ եկած բացառիկ անձնաւորութիւնները մէկ կողմ դնելով, միացեալները գիտէ՞ք ինչ եղան ինքնահաւան թերութեան, հրապարակի աշխատութեանց անյարմար ետաւորներ, կրօնապէս վատթարացած հոգիներ, բարոյապաշտ մեռած սրտեր, որոնք հանրութեան աչքին առջև կը թափուին իբր մէյմէկ նմոյշ կրթական ծրագրին, անկարող կեանքի աւօրեայ պայքարներու մէջ նետուելու, ամէն բանի վրայ ցիրուցան գաղաբարներ կազմած իրենց սովորածին գիտակցութիւնը չ'ունին, արժանապատւութիւն մը ունենալ կը կարծեն, առանց իսկ անոր կարեւորութեան վրայ գաղաբար ունենալու, եւրոպական պարկեշտ և ողջամիտ քաղաքակրթութեան անտեղեակ, անոր թեթեւօլիկ և անխարոյշական կողմին հակամէտ յաւակնոտ ամէն տեղ և ամէն պարագայի մէջ, առանց սակայն զօրաւոր կամք մ'ունենալու, իրենց եօին սիրահար, իրենց ապիկար եօին պաշտպան, միայն մէկ նպատակ ունին, մէկ բանի վրայ կը խորհին, այն է մէկ ազդու մով բարձր գիրք մը գրուել

Բայց կոյնան և կը ջախջախուին, և ազգին վրայ՝ կուգան անտանելի բեռ մ'ըլլալ, ահաւասիկ մեր ծրագիրներն, և որ աւելին՝ գաղափարկապարտութիւնը ծաւալեցինք մեր մէջ, և ազգատութեան հրաւէր կարգացինք:

Մենք տեսանք մեր Արի մուտքի վարդապետները, օժտուած անհամեմատ հանձարով, մէյմէկ արայաններ յառաջ գիտութեան գործին, աշխարհի զեկը ձեռքերնին ամրապնդող, յառաջ կը վարեն զայն անվեհեր: Մենք տեսանք և զարմացանք, ուղեցինք հետեւի իրենց և հասնիլ տանց: Նպատակը բարի էր և գովելի: Սակայն գիտէ՞ք ուր սխալեցանք: Մեր ուղղութեան, մեր հետեւելիք ճամբուն ընտրութեան մէջ:

Մենեցինք և հասկցանք որ, տնոնց գործերու վտեմութեան գաղանիքը, իրենց դպրոցներու ծրագրին մէջ է, իս-

կոյն տապալեցինք հինը, և անոր աւերակներուն վրայ կառուցինք նորը, մէկ-գի թողլով հիմնականը և գործնականը սակայն, ոյժ տուինք սնամէջ և արտաքին փայլով շողշողուն երեւոյթներով, և ուղեցինք ընտր մեր վարժարանները բարձրագոյն կրթարաններու, համալսարաններու ձեւափոխել: Ահաւասիկ հոս էր մեր սխալը, առանց ողջամիտ դատողութեան, ուղեցինք ընտր մեր պլտիկները՝ գիտութեան հերոսներ շինել, և մենք աւերաւայ ազգատութիւնը սերմանեցինք մեր մէջ:

Նրբէք չի դարձուցինք աչքերնիս արհեստներու և գրական գիտութիւններու վրայ, որոնք ազգի մը ձակատագիրը կը գծեն: Արհամարհեցինք մենք մարդկային գոյութեան անհրաժեշտ պէտքերը մատակարարող այդ զբաղումները, զանոնք ստորին դասակարգի վերաաւանդումնաւոր նկատելով: Նա մենք ամենքս ալ ուղեցինք մեր զուակները՝ դիւանագիտական, ելմտական և այլ բարձր և հոյակապ պաշտօնեաներ շինել՝ և մենք սխալեցանք:

Ազատամիտ գաղափարներու նորաձեւութիւնը մեզի չլացուց և մենք մոռցանք մեր կրօնքը և մեր բարոյական գաղափարակութիւնը, զգալով սակայն անոր պէտքը մեր պլտիկներուն համար, և նուիրական պարագ մը կատարած ըլլալու գիտումով յարմար դատեցինք յանձնել զանոնք մայրական հոգածութեանց: Բայց հոն՝ այդ հոգը ստանձնող մայրերու տեղ՝ անպատրաստ կիներ գըտանք, միայն հասկցանք պէտքը և իսկայն ձեռնարկեցինք գործադրութեան: Մեր տապալայ մայրերը փորձեցինք կրթարաններու բովէն անցունել, ձեւել, կազմադրել և ձեւակերպել մեր պահանջումներուն համաձայն:

Բայց ի՞նչ էին մեր պահանջումները: Մոռցանք գիտէ՞ք: Նա այս անգամ չարիք մը դարմանած տտենիս՝ աւելի վատթարագոյն մը յառաջ բերինք, մոռցանք, թէ մեր կրօնի և բարոյականի պաշտպանները, պլտիկներուն մենտոր-

ները մեր մայրերը պիտի ըլլային, և պատրաստեցինք զանոնք բոլորովին պահանջումներուն հակառակ ուղղութիւններով, և աւելին է, ամեն օր կը հարուածենք մեր աղջիկները իրենց երեսին տալով, այնպիսի թերութիւններ, որոնց հեղինակը մենք իսկ ենք:

Ահաւասիկ այս օրինակ կազմանիւթերով կանգնեցինք աւագի վրայ մեր կըրթութիւնը, որոնց մեծագորգ փուզումը զմեզ ընդոստ արթնցուց, բայց մենք՝ արդէն սխալած և քայքայուած գտանք զմեզ:

Իսրահայէի ուրեմն ճանչնալ մեր սխալը, և որքեւ մեր ճակտին վրայէն այս մութը, ամեն յաւակնոտ միտումներ մէկ կողմ նետելով. վերականգնենք մեր վարժարանները հաստատ հիմերու վրայ:

30 այսչափ տարիներէ ի վեր, հերիք է որչափ Ազգին ճակատագիրը, մեր քմահաճոյքներուն խաղալիք ըրինք, քանդենք ինչ որ անբարոյական է և կանգնենք անոր տեղ առաքինութեան արձանը: Մեր սկզբունքները մաթեմատիքական ճշդութիւններու պէս հաստատ և բացայայտ ըլլան. անաչառութիւնը՝ և անձնուէր ուղղամտութիւնը մեզի առաջնորդ ընտրենք, ի սպառ կործանիչ կամահաճոյութիւնը ուրանալով, պատիւը արժանաւորագունին նուիրենք, և իրաւունքը ձեռնահասին պարգեւենք: Զի յուսահատինք:

ՎԱՐՈՒԺԱՆ

(Շարունակելի)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Գրաւատուն (միւրթէհին) փոխ տըւած գրամին փոխարէն առած գրաւը, առանց գրաւատունին (րահին) հաւանութեանը կրնայ ծախել:

Պ. Եթէ գրաւատուն, գրամը փոխ տըւած եւ գրաւը տըւած պահուն, գրաւատուն թուղթ մը առած չըլլայ եւ կամ առած ըլլալով հանդերձ այդ թուղթին

մէջ, որոշեալ ժամանակէ մը վերջ գրաւը կարենալ ծախելու համար գրաւատունին հաւանութիւնը ապացուցանող բացատրութիւն չը գտնուի, գրաւատուն չը կըրնար գրաւը ծախելով առնելիքը վարդնել և աւելորդը առանդ պահել:

Սակայն եթէ գրաւատուն գրամը փոխ տըւած պահուն գրաւատունէն այնպիսի թուղթ մը առնէ որուն մէջ պայմանաժամին լրանալուն, գրաւատուն զինքը փոխանորդ կարգած ըլլայ, այն ժամանակ, կրնայ ծախել:

Այդ տեսակ թուղթ մը հետեւեալ եղանակաւ կը խմբագրուի:

Լիւայի Օսմանի

Ատէա (քանակութիւնը)

Նալընդ (քանակութիւնը) ատէտ Օսմանը լրատը տըր:

Եւսպու (թուականը) կրնիւնալէն իթիպարէն (պայմանաժամը) վատէ իլէ (գրաւատուն գործատեղին) սաքին թիւճճարտան (գրաւատուն անունը և մականունը) էֆէնտի եհտինտէն պէր վէճհի պալա (փոխ տըւած գրամին քանակութիւնը) լիւտը արիզ ու իթիպարազ իյլէմիշ օլ տըլըմտան զիմէթիմոն տէյնիմ օլուպ, մէսլաղը մէգքիւրէ մուգապիլ (գրաւ տըւած նիւթերը) թէրհին վէ տաինի միւմաիլէյէ թէսլիմ օլունմըշ օլտըլընտան, վատէի մէգքիւրէ իթիպարնտա, մէսլաղ մէգքիւր թէտիյէ օլընմատըղը հալտէ բէհն մէգպուր պիլմիւզայէտէ Ֆիրուսթ օլունարագ Հոման միւթէհատըլտէն մէսլաղ մէգքիւր կիւզէթէ վէ մատարիֆի վագատըլա պէրապէր թէսլիյէ վէ մահսուպ իթիլտիքտէն սօնրա Փազլատըթարաֆըմա իթա վէ նօքսան քալուր իտէ այրուճա թարաֆըմտան, իֆա իալմէք իւզիէ տաինի միւմաիլէյէ թարաֆըմտան վէքեալթ տէվրիյէ իլէ թէշքիլ օլընմըշ օլտըլընը միւպէյին իշպու սէհէտ թէրքիմ վէ իթա գըլընտը:

(Թուականը)

(Գրաւատունին ստորագրութիւնը)

Ն. ԹՈԳԱԹԵԱՆ

ԳԵՐՏԻՉՂԱՆՆԵՐ

ԳԵՐՏԻՉԻ (Աստուծոյ գաւազանագ)

ԻՐ ՄՇԵԿԱՌԻԹԻԹԻԻՆԵՐ

(Շարքի 166)

4. Առնուազն 2 տարին անգամ մը ազգով ծածկեցէք ծներեկները. — Տնկուլէն վերջը իւր ծածկոյթ կրուած ազգը աւելի օգտակար կըլլայ իւր ազգեցուծեամբ. ուրտի տունկերուն բոլորտիքը փորուած ժամանակ, որ հոկտեմբեր ամսոյ մէջ կը կշտարուի, այն ատեն պէտք է կիսով չափ փտած աղբով ծածկոյթ տալ: Անան եւ ձմրան անձրեւները իւրենց մէջ լուծելով աղբին դիւրահալ մասերը հողին տակը կը տանին, ուր արմատները տարածուած են: Մինչեւ գարուն աղբը արդէն աղփուտի կը վերածուի, եւ այս միջոցին երկմատնէն բրիչով (չաթալ դազմա) պէտք է փորել աղբին միացորդները փշուրուրէն հողին հետ խառնելու համար: Երկմատնէն բրիչը այս գործաւն լինելու պահին յարմարագոյնն է, որ արմատները տարածուած չեն: Գարունին մէջ ձմերը փոխանակ ձմեռին գարունին փշուրի աղբը ծներեկներուն վրայ, ընկերը ծանրադէս կը լտանդուի, որովհետեւ փտած աղբը արմատներուն իւր անունը բոն մը չի կրնայ տալ, քան զանոյններուն բոլորտիքը խմբելով, ծներեկները ծանրադէս լինելու կ'ենթադրէ, եւ չափունք առնելով փտեցնէ, եւ թէ ծներեկի բողբոջներուն մեծ արդէք կ'ազգայ որովհետեւ հողէն դուրս չեն կրնար ելլալ: Եթէ յաջողին իսկ բարձրանալու, մերթ օրեւ մասնա մերթ եւս ճշտութեամբ միջոցն: Եւ զիսկ զգոյց չեն շատ:

5. Ծներեկները հողի վրէժ (արմատը քաղալ) իւր անունին հակամակերին. — Զմեր հողամերկաւը կ'անուրէն քնէք: Եւ անիւնալ տարւածն բիրտը անստը կըլլայ, որովհետեւ արմատները օգտէն առնեցուծելու անհնարելի կը կապուի: Եւ յետագայ գարնան կ'արտադրեն սքանչելի

եւ տաք բողբոջներ, քիչը եւ հոկտեմբ. կը կ'ենէ դեկտեմբերին: Կրտս յունկերին կ'առաջէք, առած բերքը իւր թէքէն զէշ կ'ըլլեն:

6. Արմատները դոցած ատենն իւր, վերան չարցած ցողունի կ'անուրէն քնէ թիւղը, որովհետեւ անոնք անքայն ընդհատութեամբ անհուն խորքէք կըլլան, եւ անոնց մէջ չափը դուրս կը ցցուի: Եւ անիւն երբեմն իսկ կը փտին: Եւ անոնց ցլ չի:

7. Ծներեկները քաղելու համար զգուշացէք սղոցածն արմատները դործածելէ, ինչպէս իրենն եւրոպայի չափ մը ծներեկ մշակողները, որովհետեւ այդ քանակներով հասցնելու բողբոջն քիչ քանակութեամբ խորածիլ ընձիւղներն ալ կը կտրէք, որ անոնք ըլլալով կը սղոցուորէք անոնք: Եւ այսպէս քերելն անհնար մնալու կարանցաւոր վիճակ: Անոնք անիւն միջոցը մնալով փրցնելն քիչ հետեւեւալ կերպով յիշուի:

Ծներեկի հողածիւրէն անիւն երբ կը տեսնէք թէ բողբոջներ իրենց զլուխը անիւն անձ եւ հողէն դուրս հանել: Ինչպէք մին կողմէն հողմիւրջալ մինչեւ բողբոջներուն արմատը, եւ երբ ծներեկը անհողմիւրջին արմատը է հողէն, մատերն իւր կ'անցունէք բողբոջին ետեւէն, ան միւր անգամին ուժով քաղելով կը փրցնէք: Կայ թէ եւ ուրիշ գործիք մ'ալ, որ փայտալիւնի միւր կէն փողակածն զուրկուած անիւն քաղելով կը նսկնի: Եւ արմատը աւելի շուտ կ'ըլլայ գործողութեանը, քան զմիւր փայտածիլն է որ հետը դրիւնէր ալ չի կտրէ: Եթէ լաւ վարժութիւն ըլլայ, կրնայ գործածուիլ:


Տակարար բան մ'ենք իւր. — Զերոյն լինալ փանտներէն հարկցաւոր ար, ծներեկը կ'առնուի միջին տատկմանի պնդութեան քնէն: Եւ կ'ըլլայ որ արմատիկը հողէն: Եւ գորտեք քնէ հողն թէ, անիւն հողէն մէջ անիւն քնէ ծներեկը մշակել անոնց քաղալ: Եւ իւրեւր իւրեւր իւրեւր իւրեւր եւ յարմարեցնելով իւր անհատիւնը արմատներուն համեմատ, թէ այս քանակութեամբ կ'ըլլան հողին խառնելով ըստ արմատային ազալ, կիթ, դաճ, փայտածուիլ անիւնի եւ միջին բնկ հանքածուի միւր, որ անհատիւն ինչ-

պէս եւ աւազուտ հողերու մէջ սքանչելի արդիւնք յառաջ կը բերէ. եւ թէ երկաթ-ուղւոյ կայարաններու եւ հանքածուխ վառող շոգեշարժ մեքենաներ ունեցող գործատանց մօտ առատօրէն կը գտնուի եւ առանց դրամի:

Ծնեբեկարանի առաջին աղբումը երկու կերպով կը կատարուի: 1. Ամբողջ արտը աղբէլ, որ յունվարին մէջ կը կրեն աղբը եւ կը տարածեն հերկուած հողին վրայ, եւ գարնան մօտ երկրորդ անգամ հերկուած ժամանակ հողին հետ կը խառնեն: Այս պարագային մէջ շատ աղբ պէտք է, 1 հին արտավարի համար (1600 քառակուսի կանգուն, կամ 40 քայլ լայնք եւ 40 քայլ երկայնութիւն ունեցող տեղ մը) 5000 օխայի չափ, այսինքն՝ 40 ձիու բեռի մօտ: Այս կերպով աղբուած ատեն, ծնեբեկները տնկուելէն վերջ մինչեւ երկու տարի անոնց մէջ տեղերը ուրիշ բան չարեղէններու մշակութիւն ալ կ'ըլլայ:

Աղբը միայն ծնեբեկի խրամներուն մէջ դնելով, որ հետեւեալ կերպով կ'ընեն. Գարնան սկիզբները 1 ուկէս 2 բահի խորութիւնով երկրորդ հերկ մը ապաւի հողը աղէկ մը կը փշրեն. եթէ վերը ըսուած հանքային պարփնէն մէկը (կիր մոխիր եւն.) պիտի դնէք հողին մէջ, այս երկրորդ հերկէն առաջ պէտք է տարածել հողին վրայ, որ հերկուած ժամանակ կը լաւ մը խառնուի: Հերկուելէն վերջը արտը շտկելով մագիլները տնկելու կը ձեռնարկեն: Ոմանք ծնեբեկարանը շատ մը ածուներու կը բաժնեն եւ կը տնկեն 45-60 հ. մեթր հեռաւորութեամբ. բայց այս դրութիւնը աղէկ չ'է, անոր համար ասոր վրայ չը պիտի խօսինք: Ամենէն աղէկը հետեւեալն է: Իրարմէ 1 մեթր 20 հեռաւորութիւնով, (որ ըսել է 4 ոտքէն քիչ մը պակաս) արտին գլխները ցիցեր (չըրփը գազըղը) տնկելու է, անոնց քովէն 40 հ. մեթր հեռաւորութեամբ մէյմէկ ցից եւս տնկելու է, եւ ամէնքը իր դիմացինին հետ միացնելու է վերէն վար չուանչերով. յետոյ 2 ցիցին մէջ տեղէն եւ նուաններուն ուղղութեամբ սկսեցէք փոքրէ մինչեւ 14 հ. մեթր խորութիւնով

խրամներ (հէնտէկ) բացէք, մէջէն ելած հողը ալ ու ձախ կողմերը լեցուցէք: Այս խրամները պէտք է ըստ կարելոյն արեւ-եւթէն դէպ արեւմուտք ուղղուած ըլլան: Երբ խրամները պատրաստ ըլլան, անոնց



յատակը դրէք 8-10 հ. մեթր խորութեամբ կիսով չափ փտած աղբ, եւ լաւ մը խառնելով հողին հետ, շտկեցէք: Երբ 8-10 հ. մեթր խորութեամբ աղբ կ'ըսենք, մի կարծէք որ անով խրամը կը լեցնայ. ընդհակառակը, անիկա հողին հետ խառնուելով, հազիւ թէ 4-5 հ. մեթր բարձրութիւն կ'ունենայ. որովհետեւ փտած ըլլալուն՝ խտոյն կը սմբի եւ ձեր տրամադրութեան տակ պիտի ունենաք միջոց 10-11 հ. մեթր խորութիւն մը պարագա, որ կը բաւէ մագիլները տեղաւորելու:

Խրամները պատրաստուելէն վերջ, պէտք է մագիլներուն տնկուելիք տեղերը որոշել: Ասոր համար՝ պատրաստ սենցէք առաջուց շատ մը փաթիլ ցիցեր, եւ առաջին խրամէն սկսելով, ծայրէն 60 հ. մեթր հեռաւորութեամբ տնկեցէք ցից մը, եւ անկէ վերջինները իրարմէ 120 հ. մեթր հեռաւորութիւնով, մինչեւ որ խրամը վերջանայ: Երկրորդ խրամը սկսեցէք ճիշտ ծայրէն ցից մը տնկելով, եւ շարունակեցէք իւրաքանչիւր 120 հ. մեթր հեռաւորու-

թեան վրայ մէյմէկ ցից տնկելով: Երրորդ խրամը առաջինին պէս, այսինքն՝ ծայրէն 60 հ. մէթր հեռաւորութեամբ սկսելով. եւ չորրորդը՝ երկրորդին պէս, եւ շարունակեցէք հետզհետէ այս կերպով: Այս տեսակ տնկարկութեան փռանաացիք 4-5 կ'ըսեն, որ կը նշանակէ հնգամեա կամ հնգաշար, լատինական 5 թուանշանին ձեւը ունենալուն համար (V). որով տունկերը ամէն կողմէն իրարմէ 120 հ. մէթր հեռաւորութիւն ունեցած կըլլան: Պարտիզպաններէն ոմանք, խրամներուն մէջ իրարմէ 1 մէթր հեռաւորութիւնով եւ խրամներն ալ իրարմէ 1 մէթր 10 հեռաւորութիւնով կը տնկեն տեղ վաստակելու համար. բայց քանի մը տարի վերջը մագիլները շատ խոշորնալով մէկգմէկու կը դալին, եւ բերքը կը տկարանայ:

Երբ ամբողջ խրամները այսպէս «նշուցէ» (ուղղեցցեւ=jalonner, պահանջուած ուղղութեան մը կարգով ցիցեր տնկել — լայն քաղաքի «նշուցէ» քաղաքի ցիցին դիմացը դրէք 2-3 բուռ կիսափուտ աղբ եւ մէյմէկ մագիլ: Երբ կ'ուզէք ձեր գործը յաջողութեամբ եւ չուտով կատարել, պէտք է այս կարգապահութիւնը ճշդիւ գործադրել: Ընդհանրապէս մենք թուրքիացիքս երբ գործի մը ձեռնարկենք, եւ երբ մեզի ուղղեցուց կանոններ տան այդ գործին վերաբերեալ, երբէք չենք ուզեր ականջ կախել, եւ կը շարունակենք մեր գիտցածին պէս ընել. իրր թէ մենք անոնցմէ վարպետ եղած ըլլանք: Մեր գործերու անյաջողութիւններուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ այս է, այսինքն՝ աշխատութեան մէջ անկարգապահութիւն եւ գործելու մէջ հաստուն ընթացք մը:

Երբ վերոյիշեալ կերպով ամէն ինչ պատրաստ ըլլայ, ցիցերը մէկ առ մէկ հանեցէք, եւ անոնց տեղը՝ բովի հողէն առնելով, 4-5 հ. մէթր բարձրութեամբ հողակոյտեր շինեցէք. որոնց տակի տրամագիծը 12 հ. մէթրի չափ ըլլալու է: Մագիլները տեղաւորեցէք այս հողակոյտերուն վրայ, եւ խնամով արմատները տաքածեցէք անոնց բոլորտիքը:

3-4 հ. մէթր թանձրութեամբ հող լե-

ցուցէք արմատներուն վրայօք, եւ ձեռքով մէյմէկ քիչ կոխեցէք որ՝ արմատները հողին փակին: Յետոյ՝ ցիցերուն դիմացը պահեստի դրուած աղբը ձեռքով առնելով, ամբողջ արմատներուն բոլորտիքի հողին վրայ լեցուցէք. ուշագրութիւն սակայն որ՝ աղբը արմատներուն չի դալի, որովհետեւ կը փտեցնէ զանոնք: Աղբելու գործողութիւնն ալ լրանալէն վերջը, ալ բոլորովին հողով ծածկելու է ամբողջ խրամները, վերէն վար իրենց մէջէն ելած հողով, բայց մագիլներուն տեղը ահօսի պէս փոս ձգելու է, իսկ մնացեալ մասերը աւելի բարձրկէկ. եւ ինչպէս նախորդ կանոններէն մէկուն մէջ ըսած էինք, մագիլները առ առաւելն 4-5 հ. մէթր խորութեամբ միայն թաղուած ըլլալու են: Տնկարկութիւնը լրանալուն պէս, իւրաքանչիւր մագիլին քովիկը մէյմէկ ցից տնկեցէք, որ տեղերնին յայտնի մնայ, եւ ապագայ մշակութեանց ժամանակ չի վնասուին:

Մագիլները տնկելու ամենէն նպաստաւոր ժամանակն է, փետրվարի սկիզբէն մինչեւ մարտ 20 առ առաւելն: Բայց երբէք անձրեւոտ օրեր, ինչպէս եւ շատ թաց հողերու մէջ ծներէք մի տնկէք: Տնկարկութեան մէկ քանի շաբաթ վերջը ծներեկները կ'սկսին բուսնիլ, եւ առաջին ամառուան եղանակին շատ խնամք չեն պահանջէր: Երբ գէշ խոտեր սկսին երեւիլ պէտք է ջնջել, եւ եթէ եղանակը շատ չոր երթայ, 2-3 անգամ ջրելու է:

Հոկտեմբերին մօտերը ծներեկի ցօղունները գեղնելով կը չորնան. գետնէն 30 հ. մէթր բարձրութեամբ կտրելու է զանոնք, մագիլներուն տեղը յայտնի մնալու համար: յետոյ տունկերը հողամերկելու է (déchausser, արմատը բանալ), բայց ոչ բոլորովին, 3-4 հ. մէթր բարձրութեամբ միշտ հող մնալու է մագիլին պարանոցին վրայ: Այս գործողութեան վերջը, կըտրուած ցօղունները ժողվելով, տեղոյն վրայ այրելու է, եւ աղբի հետ խառնելով խրամներուն վրայ տարածելու է, (մագիլներուն պսակին վրայ երբէք աղբ մի դնէք) եւ ամբողջ ձմեռը այսպէս թողելու է

ծնեցեալարանը: Ծնեցեալները ոչ ցուրտէն եւ ոչ սառելէ կը վախնան. ուստի՝ այսպէս բաց մնալէն երբէք չի վնասուիր. բայց ընդհակառակը օդի ազդեցութեան տակ գտնուելով աւելի կը կազդուրի, եւ մեւնոյն անգամ՝ ձմրան անձրեւները ազդը իրենց մէջ լուծելով, կ'իջնեն մինչեւ արմատները, որ իրենց տրամադրութեան տակ կ'ունենան առատ եւ պատրաստ սնունդ:

Ղ. ԲՈԼԱՏ

(Շարունակելի)

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Խնձորին յատկութիւնները

Կ'ըսեն թէ խնձորը երբ առանց կեղեւելու ուտուի, կոկորդի հիւանդութիւններ կը պատճառէ, բայց իւր միտին համար ահաւասիկ բժիշկի մը կարծիքը, խնձորը ուրիշ բոլոր միւրգերէն աւելի ֆօֆօս եւ կամ եթէ կուզէք — Լատին — պարունակելուն համար պէտք է ամեն երեկոյ պառկելէ առաջ հատ մը ուտել, որ երկիւրամանց եւ լեարդի գործողութիւնը կը դիւրացնէ, եւ ստամոքսին մէջ գտնուած աւելորդ թթուները ծծելով, մարսողականութիւնը լաւ կատարել կուտայ, որով հանգարտ եւ կազդուրիչ քուն մը յառաջ կը բերէ, իր թեթեւ թթուութիւնով, լիմոնին պէս բերաններու համար հակա-նեխիչ մ'է եւ շատ ծարաւողներուն, կարգ մը հիւանդներուն եւ... գինովներուն պապակը կ'անցունէ:

Ախորժակամ բնկելի մը

Կազինի փեճեկները (չոփ) սանդի (հավան) մը մէջ դնելով ծեծելու է առանց փոշիացնելու: Ծեծուած փե-

ճեկները պէտք է մէկ լիթր ջուր պարունակող ամանի մը մէջ դնել, եւ մինչեւ մէկ ժամ ուժով եռացնել, վար առնելէդ վերջը, կէս ժամու չափ ձգեցէք, ու յետոյ պարզուտէ (սիւզկէճ) անցուցէք եւ ըստ հաճոյից խառնեցէք կաթ եւ շաքար: այսպէսով չորովաթի համ կ'ստանայ:

Սոխը իբրեւ հակամեխիչ

Գիրմանական թերթ մը կըսէ թէ, հիւանդի մը կամ պզտիկ տղայոց սեւեկին մէջ երբ սոխ մը երկուքի կամ չորսի ճեղքելով դնէք, գէշ հոտերը կը ծծէ եւ տեղւոյն օդը կը մաքրէ: Բոլոր հոտերը կը կտրուին եւ մի միայն իւր հոտը կը մնայ: Փորձեցէք որովհետեւ ծախք չունի, դէշ խելք չէ, բայց սոխին հոտը...

Յուրաններու (սիւրայի) մէջ յտկինք

(սիւմպիւլ) եռացնել

Պարզ տեսակները (միաթերթ) աւելի յարմարութիւն ունին խոտերաք մշակութեան, որովհետեւ բազմաթերթ տեսակներէն աւելի գեղեցիկ ծաղկեփունջիւ կ'արտադրեն: Հիսկեալ կերպով կ'ընաք ընել: Յուրանը լիցուցէք մաքուր ջուրով մինչեւ որ յակինթի սոխին գպի, բայց առաջուց պէտք է յուրանին մէջ մէկ երկու կտոր ածուխ դնել, եր ջուրին յատակութիւնը պահելով սոխին արմատները նեխելէ կ'արգելու: Յուրանները լիցնելէն վերջը, պէտք է զանոնք զետեղել չոր, զով եւ մութ տեղ մը, ուր պէտք է միան մինչեւ 4-6 շաբաթ, երբ արմատները յուրանին յատակը սկսին հալնիլ, պէտք է աստիճանաբար լոյսին վարժեցնել, եւ յետոյ բոլորովին լոյսի եւ

օդի մէջ հանել, զգուշանալով սակայն օդային հոսանքներէ:

Պէտք է հոգ տանիլ որ յուրանները շարունակ ջուրով լեցուն ըլլան, երբ բորբոսում (քիւֆէնմէք) և կամ կեղեի կտորուանք գտնուին, պէտք է խնամով մաքրել զանոնք, որպէս զի արմատները կամ սոիւր չի փոխեցընեն: Պէտք է ջուրը շարունակ փոխել, բայց երբ կը տեսնէք թէ արմատները կը նեղուին ջուրին հնութենէն կրնաք, այն ատեն փոխել: Երբ ծաղիկները բաւական բարձրացած ըլլան պէտք է իրենց ցողունը երկաթէ բարակ թելերով բռնել տալ որ վար չի ծռին:

* * *

Քարիւղ պարունակող ամանները մաքուր պահելու միջոց

Քարիւղ պարունակող ամանները և ընդունարանները մաքուր պահելը դիւրին գործ չէ: Ահաւասիկ սակայն բաւական դիւրին միջոց մը ուրկէ տանտիկիները կրնան օգտուիլ: Պէտք է մարած կիրով թեթեւ կրաջուր մը պատրաստել, և ատով թէ լամպարները թէ իրենց ընդունարանները ինչպէս և ամեն քարիւղ պարունակող ամանները ցողուել, ուրկէ փրփրալից խառնուրդ մը յառաջ կուգայ, որ կրնայ դիւրաւ պարպուիլ: Քարիւղի հոսը ամաններէն բոլորովին անհետացնելու համար, պէտք է կըրաջուրը քիչ մը տաքցնել ու վրան քիչ քանակութեամբ կիրի քլորուկ (քիրէճ քայմաղի) աւելցնել:

* * *

Թաւիօի Յարգարում

Դիտէք թէ՛ թաւիչին փայլը պղծտիկ չփումով մը՝ անմիջապէս կ'արուի, որ եթէ այդ կերպասով ծանրագին հագուստ մը չլինած էք, անշուշտ

սիրտերնիդ պիտի կոտրի, բայց ահա միջոց մը, որ դիւրութեամբ ատար առաջքը կ'առնէ իւր նախկին փայլը տալու: Թաւիչը հակառակ կողմէն թեթեւ մը թրջեցէք սպունքով կամ թաց լաթով մը, յետոյ լաւ տաքցած երկաթի մը վրայ բռնեցէք, զգուշանալով սակայն, որ թաւիչը երկաթին չի դպի: Տաքութիւնը ջուրը կը շագիտեցնէ, և շոգին հիւսուածքէն ներս անցնելով, իրար խառնուած և ծռած թելերը կը շտկէ և կրկին կը ցցէ զանոնք: Այս գործողութիւնը կատարելնէ՛դ վերջը թողէք որ ինքնին չորնայ, կրնաք նաեւ աւրուած թաւիչները յարդարել, վերը ըսուածին պէս նախ թրջելով և յետոյ չորս ժայրերէն բռնելով և լաւ մը քաշելով, առանց դետինը դնելու խիստ թեթեւ կերպով մէկ քանի անգամ տաքցած արթուկ մը վրայէն անցնելով:

ԱՐԱՔԱ

ԽՈՇԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Նարնջի սնկզդիակաւն դոնկող (հեռլէ)

12 նարինջ և 6 լիմոն կեղևեցէք, հիւթը ճզմելով քամեցէք և պարզուտէ անցուցէք, աւելցուցէք 7-8 կուամ մածոյց, որ պէտք է լուծուած ըլլայ 50 կուամ տաք ջուրի մէջ, — բայց տաք ջուրի մէջ լուծելէ քառորդ ժամ առաջ, պէտք է թրջիլ պաղ ջուրի մէջ — 6 նարնջի կեղևները չփեցէք խոշորկէկ շաքարի կտորի մը վրայ, յետոյ քերեցէք չիւած տեղը, աւելցուցէք դոնդոնի վրայ, և քաղցրացուցէք ուրիշ շաքար դնելով ձեր ճաշակին համեմատ: Եւ կամ աւելի լաւ, նարինջներուն դուրսի կարմիր կեղևը, բաւակ մը ստկելով եփեցէք թանձր

չաքար ջուրի մէջ, որ պէտք է պատ-
րաստուած ըլլայ 125 կում շաքար
և 100 կում ջուրով, կէս մը պա-
ղած խառնեցէք պատրաստուած նա-
րընջի հիւթին, կաղապարներու մէջ
լեցուցէք և կամ ունէ յարմար ա-
մաններու մէջ թողուցէք որ լաւ մը
պաղիւ եթէ ամաններու մէջ լեցու-
ցիք, պաղելէն վերջ սեղանի մը վը-
րայ դիւրիվայր շրջեցէք, և դոնդողը
մանր քառակուսիներու և կամ ձեր
հաւնած ձևին բաժնեցէք, այս դոն-
դողը կը գործածեն խմորեղէններ զար-
դարեւր:

Ուռուցիկ բաճարակ (լաւանկի)

Առէք հետեւեալ չափերով

Ջուր	$\frac{1}{2}$ լիթր
ձերմակ ալիւր (մաճառ ունը)	$\frac{1}{2}$ ֆլօ
Կարագ	$\frac{1}{3}$ »
Հոտարակ աղ	10 կում
Լիւնի դուրսի բարակ կեղեւը	$\frac{1}{2}$ հատի
Հին շաքարովի (սօմ)	$\frac{1}{2}$ օղիի փոքր գլթ
Հաւկիթ	12 հատ

3 լիտր պարունակող սանի մը մէջ ե-
ռացուցէք վերայիշեալ ջուրը, կարագը,
աղը, լիւնի կեղեւը և շաքարովին. երբ
փրփրալով բարձրանայ խառնուրդը, սա-
նը կրակին վար տաէք, և դրէք մաշող
կրակի վրայ անանկ որ չեփի, ալիւրը մա-
ղէ անցնելով վրան տակցուցէք և լաւ
խառնեցէք, որպէս զի կուտ կուտ չի
չի ժողովի, չորացուցէք խառնուրդը կրա-
կին վրայ դնելով 3-4 վայրկեանի չափ,
հաստատուն սեղանի մը վրայ տաէք սա-
նը, և յետագայ կերպով հաւկիթները
խառնեցէք:

Առաջին անգամ 2 հաւկիթ, և ուժով
կարելի եղածին չափ շուտ գարնելով, ա-
պա թէ ոչ հաւկիթները կ'եփին, յետոյ
3 հաւկիթ միշտ առաջինին պէս, յետոյ
4, և այսպէս շարունակաբար, մինչեւ որ
զոնգուածը փայլի և նրբանայ, տաէք
հիմա ասպուրի դգալով խմորէն, և տա-

պակով մը հալած կարագի մէջ ձգեցէք
ձախ ձեռքերնուդ ցուցամատովը հրելով,
10 վայրկեան կը բաւէ եփելու, տապա-
կէն հանելուդ պէս վրան շաքար ցա-
նեցէք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵՁՈՒ

Թուրքիոյ հայերը թէեւ գրական տար-
րեր սեռերու մէջ առաւել կամ նուազ
փութկոտութիւն և յաջողակութիւն ցոյց
կուտան, սակայն լեզուի ուսումնասիրու-
թեան ոչ ոք հետաքննուող եղած է ցարդ:
Հիւնքեարպէյէնտեան բառարան մը ե-
րեւցաւ թէպէտ Պոլսոյ գրական հորիզո-
նին վրայ, լայց հեղինակին մահուամբ
թէ գրքին սղութեան պաճառաւ քիչեր
կրցան օգտուիլ անկէ: Սոյն աշխատու-
թիւնը դովելի երկերէն էր արդարեւ, և
մեծ հմտութեան արդիւնք(*). այլ հեղի-
նակին որամտութեան չափազանցութիւնը
մերթ ընդ մերթ տեղի տուած էր անը-
նական կետերու: Բայց Միթիթարեան հայ-
րերը, ժրաջան մեղուներու պէս, մաթը
լոյսին խառնելով, անգագար կը տքնին
լեզուաբանական նոր գիւտեր, նոր անա-
կընկալներ ներկայացնելու հասարակու-
թեան եւ իրաւամբ պատիւ կը բերեն ի-
րենց ազգին, լեզուին և Միթիթարեանց:
Իրենց ջանասիրութիւնն ու եռանդը վար-
կենապէս չչիջանիր: Միշտ թարմ, միշտ
նոր նիւթեր՝ որոնք յարաբերութիւն ու-
նին հայ լեզուի հետ, իրենց անդուլ ջան-
քերուն առարկայ կ'ընեն, ո՛ւր էր որ
թրքահայոց մէջ ալ գտնուին Բագրա-
տունիներ և Այալնեաններ:

Ռուսիոյ հայերն ալ այս մասին նախա-
ձախնդիր են՝ Միթիթարեաններէն տար-
րեր եղանակով մը, որ հիմնական կարե-

(*) Այլ կարծուածին չափս Ե. Խ.

ւորութիւն մը ունի արդի պարագաներու մէջ, այն է, դրամական կտակները ներ՝ միայն հայ լեզուի ուսումնասիրութիւնը քաջալերելու: Ահա այս տեսակէն է նաեւ իզմիրլեանց կտակը:

Սակայն Պօլսահայոց մէջ ո՞ր է այս գաղափարը. թերթեր իսկ քիչ անգամ սոյն օրինակ յօդուածներու տեղ կը չընորհեն. այս պակասը լեցնելու համար մերթ ընթ մերթ պէտք է երեւին բանասիրական գրութիւններ, որոց բաւական տեղեակ անհատներ կրնան գտնուիլ: Մեր լեզուն քննուելու, հետազոտուելու խիստ շատ պէտք ունի. քանի՜ քանի կետեր մութի մէջ մնացած են տակաւին, որոց մասին լուրջ քննութիւններ՝ անշուշտ կրնան մեծ արդիւնքներ ընձեռել:

Մինչեւ հիմա, 20—25 տարի է որ հայկական մատենադրութիւնը չնորհիւ բանասիրաց խուզարկու նայուածքներուն, նորանոր փոփոխութիւններ կրեց. հոս՝ հին գրքերու նիւթերն քննականապէս բաղդաւաւորութեան գրուեցան օտար մատենաներու հետ. անդին լեզուներու խիստ մօտիկ առնչութիւններ երեւան ելան հայերէնի հետ. հոգ, հին պարսկերէնն ու նորը, յունարէնն ու լատիներէնը քրքրուեցաւ թաքուն խնամութիւններ, լեզուական ընդհանուր ազգականութիւններ պարզելու համար: Եւ դարձեալ կան ու կը մնան անանկ գաղտնիքներ զոր ժամանակը պիտի կրնայ անշուշտ երեւան հանել:

Գրական այս սեռը սիրողներ շատ կը գտնուին մեր մէջ, բայց ցաւալին այն է որ այս սէրը իրականապէս հաստատուելու համար կամ բարի կամք և կամ կարողութիւն կը պակսի: Ինչո՞ւ Գերմանացի բանասէրը կամ Ֆրանսացի հայագէտը պարտաւորի մեր ընելիքը ինքն իրագործել: Անոնք, որոնք կրցած են մեր լեզուն կարեւոր տարրերուն թափանցել, շատ կը հետաքրքրուին, երբ դիպուածաւ պատահին օտար լեզուի մը անանկ բառերուն, որոնք յար և նման կ'երեւին հայերէնին: Աւելցո՛ւր նաեւ ասոր վրայ պարսկերէնի և յունարէնի առաւել կամ

նուազ հմուտ անհատի մը հետաքրքրութիւնը ու պիտի տեսնես որ զբաղում մը կը դառնայ ան, որ խիստ օգտակար ու կարեւոր արդիւնքներ կրնայ առաջ բերել:

Արդարեւ կատարեալ սրամտութեան արդիւնք են լեզուներու վրայ կատարուած ուսումնասիրութիւններն. այս օրինակ աշխատութիւններու շնորհիւն է որ, այսօր հայ լեզուն պատիւ ունեցած է հնդեւրոպական լեզուներու շարքին մէջ կարեւոր տեղ մը գրաւելու:

Թէ ի՞նչ են հնդեւրոպական և այլ լեզուներ, յաջորդ յօդուածով մը պիտի խօսիմ, և պիտի շարունակեմ շարք մը յօդուածներու մէջ լեզուական ուսումնասիրութիւններ, յայտնելով նաեւ իմ գաղափարս լեզուներու ծագման խնդրոյն վրայ, որ ցարդ կարեւոր լուծում մը գտած չէ լեզուաբաններու անչափ աշխատութեանց հակառակ:

ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ՍԱՐՈՐԴԻՆ

—

(Վեպիկ)

—Թող տո՛ւր Ներսէս թո՛ղ...:

—Ա՛խ ջանանս, քանի՞ մէկ տանջես զիս, մինչեւ ե՞րբ երեսդ ծածկես ինէ. ինչո՞ւ ասանկ կ'անես, ի՞նչ եմ արէր քեզի, հօրդ արտը քարեցի, մօրդ պաղջան թալլեցի, ի՞նչ արի՛, ըսա, ինչ չանի տեսն եղաւ, ի՞նչ, տարիներ անցա՛ւ, հա՛, երէկ չէ՞ր, առջի օրը չէ՞ր որ հետդ, սարերը ձորերը ոտուընդու տակը կ'առնէինք, ի՞նչ, տղակութիւն կա՞ր ան տեսն... հապա դուն չէ՞ր ինծի ըսողը «Բեզ չի տեսած օրս գէշ կ'ըլլամ», հիմա ինչո՞ւ չես ըսիր, մեծցար հա՞, անոր համար... մոռցա՞ր Պալենց պաղջան խնծորին ծառը, ես թափէի դուն գօտիդ շարէի, խնծորի կարմիր քու կարմիր թշերուդ քոչի, մոռցա՞ր սարի կողէն ակ մը բացի ջուր վազուցի, ափիս մէջէն

սկսեցին անցնել, ըստ՝, մոռցա՞ր ան օրը, ոտքդ փուշ էր մտեր չալակս եմ առեր, մինչեւ տուն եմ բերեր, ալ ի՞նչ անէի:

— Ի՞նչ կ'ուզես ինծիմէ, ա՛խ, չեմ գիտեր:

— Բան չեմ ուզեր, մինակ քեզ կ'ուզեմ քեզ. հասկցա՞ր, թէ՛ դուն չես գիտեր, Վառեակը գիտէր՞, հա՞...:

— Հապա ես չուզեմ նէ՛...:

— Պիտի ուզես Վառեակ, պիտի ուզե՛ս, թէ՛ չես ուզեր մեռնիմ:

— Դէ՛հ թող տո՛ւր երթամ... իմ մօր աչեր իմ ճամբան է, թէ՛ ուշանամ մա՛րս տնկէ ականջ:

— Քուկին մա՛ր ըլլայ իմ զոքանջ:

— Իմ հօր ճամբան ասկից է, թէ՛ հիմա դառնայ սարերից:

— Թող դառնայ, քուկին հա՛ր ըլլայ իմ աներ:

— Թէ՛ իմ աղբրտիք տեսնեն իմ մօտ զարնեն քեզ:

— Դէ՛հ իմ հոգիս տամ քու ոտից տակ՝ բան մը չէ, թող քու աղբրտիք ըլլան իմ ճան աղբրտիք:

— Ա՛խ, Աստուածածի՛ն:

— Դուն ես իմ Աստուածածին:

— Ինչո՞ւ եկայ ես ասօր աս աղբան գո՛ր:

— Ձե՞ս գիտէր իմին երկու լուսս... զիս տեսնելու:

— Սատանան տեսնէ քու երես...

— Դուն տեսար իմ երես, հրեշտակս:

— Պաղատիմ քեզի Ներսէ՛ս, ճամբայ տո՛ւր, տանիմ իմ կուժ պարպեմ տաշտի մէջ, իմին խեղճ մար թոնիր վառեր ջուրի ճամբայ կու նայի, թէ՛ ես չաղուեմ ալուր ա՛ն էփէ լօշեր, թէ՛ հիմա ժամ է դառնան տուն իմին հա՛ր, իմին աղբրտիք, կ'ուզեն տաք տաք թանապուր, ուտեն երթան արտեր, թէ՛ ժամ անցնի... ոտքդ պագնեմ Ներսէ՛ս...:

— Սիրեմ քեզ Ներսէս:

— Հերի՛ք... ալ հերի՛ք...:

— Ի՞նչ է քու ուզած:

— Խօսք տո՛ւր:

— Տամ, շատ աղէկ, տամ, թող տո՛ւր:

— Ձէ՛... ատ չեղաւ, իմինս պիտի ըլլաս:

— Ըլլամ, քուկը ըլլամ, թող:

— Երգում կ'ուզեմ երգո՛ւմ:

— Աստուած իմ...:

— Աստուած կ'ուզէ:

— Մ'ըլլա՛ր չարսիրտ:

— Դո՛ւ ալ մ'ըլլար քարսիրտ, հերիք մաշեցիր զիս:

— Քուկը եմ, Ներսէ՛ս:

— Երգուցի՛ր, Վառեակ:

— Թէ՛ քուկը չըլլամ Սուրբ Սարգիս վրաս փլչի:

— Ա՛խ իմ հոգիս... դէ՛հ հիմիկ եկուր իմ նշանածի պաշիկ տամ քու ճակտիդ, բարեւ արա՛ ինծիմէ քու մօր, ըսա՛ թէ արեւուն մեռնիմ իմ զոքանջին:

* *

Երկար ատենէ ի վեր առիթ կը փնտռէր Ներսէս, Վառեակին հետ առանձին ըլլալու և նեղը ձգելու: Այդ առիթը չի փախուց Ներսէս. Վառեակին սիրովը վառուած էր, սրտին սիրածն էր. պէտք էր իրը ըլլար, ուրիշ ճար չի կար: Եւ վերջապէս երգուցեց զանի:

Ներսէս ապահով էր ա՛լ. Վառեակ ուրիշին չէր կրնար ըլլալ, այլ միայն իրեն: Շինականին հաւատքը շատ զօրաւոր է Սուրբ Սարգիսի վրայ:

Եւ արդէն Վառեակ անտարբեր չէր. իր ալ սրտին սիրածն էր այդ Սարգիսին: Շարաթ մը վերջը շինական Տէրտէրը օրհնած էր նշանտուքը:

Այլ եւս Վառեակ տնէն դուրս չի կըրնար ելլել, նշանուած է: Մեղրալուսնին կրնայ երեսը բանալ:

* *

— Դէ՛հ տղաք... ճամբայ ընկնինք:

— Մէջերնուս պակաս կա՛յ:

— Ազատենք Սարգիսը և վարդուկենց Մինասը չեն եկած:

— Կենանք քիչ մըն ալ տղա՛ք, խօսք տուած են, հիմա ուր են ուր չեն անոնք

ալ կուգան:

Անոնք ալ կը հասնին:

— Քանի՞ հոգի ենք, Մինա՛ս:

— Կեցի համբա՛ւ... տառնը օրսը հոգի ենք, Ներսէ՛ս:

Տառնը եօթը հոգի, և ամենն ալ վերէն վար գինեալ. Ներսէսն ալ պարագլուխ... ի՞նչ պիտի ընեն այս մարդիկը:

Ճամբայ կ'ընկնին և անտառի մը մէջէն անցնող ճամբու մը երկու եզերքը մաքառներու մէջ դարանամուտ կ'ըլլան:

* *

Կէս ժամ վերջը հեռուէն խառնիխուռն նուագարաններու ձայներ կը լսուին. քաղքըցունակ չընկնային թրթռացող ձայնը հինաւուրց զանաշէն ականջներ խլացնող ճաթառած ձայնին հետ ընկերացած գալուէն միօրինակ բամբուլով կամաց կամաց կը մօտենան:

Հարսնառ մըն է դէպի քաղաք ճամբայ ելած:

Հարսնեւորներ արք և կանայք բոլորն ալ ձիերու վրայ հեծած: Արանց շարքին մէջ զարդարեալ ձիու մը վրայ ճղճիմ հասակով, վեհերոտ և հպարտ կեցուածքով երիտասարդ մը կայ, «փեսան» է: Ետեւէն կանանց շարքին մէջ նոյնպէս զարդարեալ ձիու մը վրայ երեսը հաստ քօղով մը ծածկուած կին մը կայ, «հարսն» է. և հարսին երկու կողմը երկու հարսնեղբայրները:

Կը մտնեն անտառը և կը հասնին դարանակալներուն մօտ:

* *

— Դէ՛հ աղաք. կը պոռայ Ներսէս:

Եւ իսկոյն օդին մէջ պարպուած տառնը եօթը հրացաններու միահամուռ ձայնը անտառը կը դղրդացնէ:

Ահ ու սարսափ մըն է կը տիրէ հարսնեւորներուն մէջ, մանաւանդ կանանց ձիւքերը և լալագին պոռչըտութեանը տուելի կ'աւելցնեն սարսափը:

Փախչող փախչողի. որո՞ւ բանին չէր դար փախչիլ և ազատիլ, փեսան ամենէն առաջ փախեր էր:

Մարդ չէր մնացած այնչափ բազմութենէն բացի հարսէն և իր երկու եղբայրներէն, որոնք տեղերնուն չէին շարժած և ճամբուն մէջտեղը ձիերով կայնած էին:

Յառաջ կը նետուի Ներսէս իր ընկերներով, և հրամայական շեշտով մը «Ն՛տ դառցիք» կ'ըսէ հարսին եղբայրը:

Եւ մէջերին առած հարսը կ'ուղղուին դէպի գիւղ. հրացանները միշտ կը լեցունին ու կը պարպուին, օդը կը թնդացնեն և մթնոլորտը վառօդի հոտով կը լեցնեն:

Շիտակ ժամ:

Ներսէս իր ընկերներով շրջապատեալ Սեղանին առջեւը գլուխ գլխի տուած է հարսին հետ:

Ներսէսին և Վառեակին նշանը օրհնող Տէրութիւնը պսակն ալ կ'օրհնէ և կը պսակէ «Աստուած կապեաց մարդ մի քակիցէ»ն բարձրաձայն ըսելով:

Եւ երկու սիրող հոգիներ կը միանան:

Քաղքըցիին խեղացի զաւակը իր հարսնիքը աւելի փառաւոր ընելու համար, գիւղին անշուք մատուռը պսակուիլ չէր բարեհաճած:

* *

Շինականը ամէն զրկանքի կը հանդուրժէ, բայց Սարսիգին սրտին հետ խաղ խաղալ չառ դժուար է:

Իր սրտին սիրածը կամ առնելու է, կամ մեռցնելու և մեռնելու է:

Հազիւ երեք ամիս անցած էր Ներսէսին և Վառեակին նշանտուքը. երկուքն ալ իրենց սիրոյն մէջ կ'օրօրուէին մէկմէկէ հեռու և անհամբեր հարսնից օրերուն կը սպասէին:

Օրին մէկը Չօրպաճիին զաւակը գիւղ կուգայ և Վառեակին ծնողացը տունը հիւր կ'ըլլայ:

Աչքը կը խածնէ Վառեակը... կը զարնուի:

Երկու օր վերջը քաղաքէն Չօրպաճիին կողմէ խնամի կուգայ Մարտիրոս աղային, «Աստուծոյ հրամանաւը աղջիկը մանջուն»:

Եւ Չօրպաճին կ'աղէ, բացարձակ պա-

հանջ մըն է ըրածը. մերժել անկարելի է. եթէ ոչ արտերը կը գրաւուն, ջաղացքը և տունը կը ծախուին:

Խօսքը կը լմնայ և հարսնարարի օրը կ'որոշուի:

Վառեակի գաղտնաբար լուր ղրկած է Ներսէսի «ազա՛տէ կամ մեռցո՛ւր զիս, չեմ ուզեր զատուիլ իմ սարերէս»:

Եթէ Վառեակ լուր ղրկած չըլլար, Ներսէս արդէն որոշած էր ընելիքը:

Եւ Վառեակը ապահովցնելու համար ինք ալ պատասխանած էր «Ան քաղքըցու ցածորդին իմին վառելովս ճէ՛-ճէ՛-հ հանել կ'ուզէ, բայց դուն հոգի անգամ մ'ընէր, ես անի իր փարաներուն վրայ պիտի նստեցնեմ, անոնցմէ թող ճէ՛-ճէ՛-հ հանէ»:

Եւ ըսածը ըրաւ Սարորդին:

ՔԱՐՈՂ

ՄԱՀԱԳՈՅԺ

ՏԻԳՐԱՆ ԷՖ. ԶՈՒՀԱՃԵԱՆ

Մեր գեղարուեստական դասակարգէն՝ մեծ կորուստ մը կրեցինք շաբթուս մէջ յանձին Տիգրան Է. Ֆ. Զուհաճեանի որ մեռաւ Զմիւռնիոյ մէջ:

Զուհաճեան մեր երաժշտական գոհարներէն մին եղած է իբրեւ քաջ երաժիշտ ու դաշնակահար եւ հեղինակ:

Հրատարակած է Թաշճեան Էֆէնտիի հետ արեւելեան եղանակներու առաջին պարբերական հրատարակութիւնը, հեղինակած է կարգ մը օրենդներ, Լէպլէպիճի, Զէմիրէ որոնք այնքան հռչակ հանած են:

Յիշենք նաեւ իր «Էօն Մօման չտը Բլէ-զիր»ը Բաքաւտ տը Բուս) Վա Զեֆիր Զեմիրէ գատրիլ, Մահանուագ մը եւլն:

Զուհաճեանի յիշատակին պահպանումը պիտի ըլլայ այն ատեն երբ ունենանք անոր նմաններ ինչ որ մեր փափաքն է:

ԽԱԶԻՆԷԻ ՄԷՔԵԱԹԻՊ

ԿԱՄ

ՄԻԻՆՔԷՄՄԷԼ ՄԻԻՇԱՄԹ

Ահմէտ Բապիւմ եւ Մուսթաֆա Բէշիտ պէյերու սոյն հեղինակութիւնը իւր տեսակին մէջ մէկ հատիկ է, չունենալ չարժեր:

Ընտանեկան եւ վաճառականական նամականի ու թղթակցութեանց գողտրիկ նմոյշներ, գրական հատուածներ, յանձնարարագիրներու, ամանորի տօնի եւ այլ պաշտօնական աւուրց յատուկ, նաեւ պատուանշանի եւ սատիճանի բարձրացման համար պէտք ըլլալիք շնորհաւորական գրութեանց շատ սիրուն օրինակներ, աղբսագրի եւ խնդրագրի եւ ասոնց մէջ տեղը եւ վերջերը գործածուելիք ամենաշարմար բառերու եւ պարբերութեանց կտորիկներ ընթացիկ մուրհակաց եւ բաց մուրհակաց փոխանակագիրներու, պայմանագրութեանց Սէփէ-Բէյի եւ բողոքագրի եւ ասոնց նման պաշտօնական գրութեանց անթերի օրինակներու շարք մը կը պարունակէ, վերջապէս. երկար չընենք, գործնական մարդու մը համար ստէպ պէտքը զգացուելիք գիրք մ'է:

Առէք եւ չպիտի զղջաք:

Կեդրոնատեղին է՝ Պապը Ալի ճատտէսի թիւ 46 Առաքել էֆէնտի Թօզլեանի Գըրատունը 15 դրուշ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՏ ԱՄՍՈՑ

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ. — Աշխարհաբար գործնական Քերականութիւն եւ շարադրութեան տարերք—չըջան Ա. — տպգր. Բ. (տպ. Մատթէոսեան 80 էջ Ա.—Է. 120. — կգմ. գին 2 դրշ. կեդրոն. Պալենց գրատուն:



ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

1. ԱՐՍՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ
 Կ. Պոլիս Գնահատման խանի Տակ թիւ 3
 Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
 կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
 ամէն տեսակ թարմ դեղորայք. փրա-
 բուժական գործիքներ, Անգղիական և
 Գաղղ. պատրաստ դեղեր, գծնականներ,
 գինիներ և հանքային ջուրերու մեծ
 մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլան-
 եան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար
 ատեն անձնական փորձառութիւններ
 ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն
 խնայեր իրենց յաճախորդներն գոհաց-
 նելու համար, մասնաւոր ուշադրութիւն
 կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
 կը զրկեն դեղորայք, ամենայն արա-
 գութեամբ, թարմ և մատչելի գներով:
 Զարածճի մլուկներու և լուերու ևն.
 համար միջատասպան փոշի Poudre in-
 secticide մեծաքանակ բերել տուած են
 ուղղակի Տալմաքիայէն, որուն համար
 մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
 րենք յարդոյ հասարակութեան:

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական
 և քաղաքային հիւանդանոցներու մէջ
 պաշտօն վարած է, պատիւ ունի ծանու-
 ցանել թէ այս անգամ իւր բնակու-
 թիւնը հաստատած է Դատը-Դիւղ Պա-
 տէմ փողոց, Թիւ 12. ուր հիւանդ կ'ըն-
 դունի ամէն օր, ի մասնաւորի աչքի
 հիւանդութեանց. իսկ Զորեքշաբթի և
 Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկե-
 շեցոյ դիմաց Զպուքճեան Լեւոն էֆէն-
 տի հանրածանօթ Դեղարանը, և հոն
 իրեն դիմող աչքատ հիւանդները ձրի
 կը դարմանէ:



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՑԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղալ Պէյ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
 ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ
 ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
 կողմերը: Գաւառներու յանձնարարու-
 թիւնները փութով և խնամով կը կա-
 տարուին:

Ձինական, Հնդկական, ծաղայի և Սէյ-
 լանի էն աղնիւ թէյերն ուղղակի բեր-
 ուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղ-
 ծերէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
 Ստորագրութիւնը:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ՊԱՐԵԼ

Բոլֆա, Բոլֆա-Մագուրֆա, Վալս, Զօրիւ,
 Բա-սը-Բաքուր, Բոլֆա-Քուուադէ,
 Բա-սե-Բաքիկոն, Բասրիլ, Լանսիէ
 Ոսֆի ձեւերը 34 պահպաններով բացատրուած է

Իր տեսակին մէջ այս առաջին գիրքը
 կը ծախուի Մէրճան փողոց, Մարգար-
 եան Դրատունը և Պալի-Բաշա Պարոնեան
 դեղարանը Հեղինակին քով:

Գին 5 դրուշ

Հանրագիտակ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնադրապէս :
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական, Եւայլն, Եւայլն. շահեկան նիւթեր :
 Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
 Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ

Տնօրէն.—Խմբագրապէս Ղ. ԲՈԼՍ

Կ. Պոլիս, Մանուկ փառա, Գիւրգիս խան Արամեան Տպարան, բիւ 26

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար դիմել

Գրավանառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՅՐԱՄ ԷՔԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մեհան Զաւրսը բիւ 57

Հանրագիտակ պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ, ազգաբարոյթիւններ, խիստ դիւրամտչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն ղրկել երկու օրինակ, զոր պիտի ազգարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ԳՈՐԾԱԿԱԼ ՉԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնքապ. — Դարեգին էֆ. Պողարեան	Կեիլայօլու. — Յովէֆ էֆ. Տէր-Յովսէֆեան
Ասա-բազար. — Ստեփան էֆ. Սահրիջեան	Կիրատոն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Արաբիի. — Յ. Պ. էֆ. Մանուկեան	Մարաւ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Գուրս-Պէլէն. Արժ. Տ. Ստեփան քահանայ	Վարժապետեան
Մկրեան	Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Գահիրէ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նաթանեան	Մուշ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
Էրզրում. — Եղ. էֆ. Տ. Աղարեան	Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Թեհրան. — Կարապետ էֆ. Բաբարեան	Պարսիզակ. — Վահան էֆ. Զիլունի
Իզմիր. — Կարապետ էֆ. Մալճանեան	Պրուսա. — Օննիկ էֆ. Լուսթեան
Իզմիս. — Աբրահամ էֆ. Կտաճեան	Ռոստոք. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան
Մալխարա. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան	Սամսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
Խարբերդ. — Խոսրով էֆ. Բէշլեան	Սրվազ. — Յ. էֆ. Դարակէօղեան
	Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Դիւղ, Պողոս էֆ. Ալնաւորեանի խանութը :

Դասը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքեան Դեղարանը :

Սկիւտար, Փիշթօֆեան էֆ. խանութը :

Բերա, Դեմ փօղոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը :